Արձանագրություն N 3

Դատական դեպարտամենտի կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «29» մայիսի 2024թ.
Ժամը՝ 10:30

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նախագահ՝

Արթուր Ասատրյան՝ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ **ԳՊ/ԳԱՊ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար,

հանձնաժողովի անդամներ՝

Խորեն Պետրոսյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար /Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Արթուր Թամրազյան՝ Դատական դեպարտամենտի համակարգչային ծառայության գլխավոր մասնագետ (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԳԱ**),

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) ,

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար (Գնման Պատասխանատու /Բացման Աշխատակազմ՝ **ԳՊ/ԲԱ**) :

հանձնաժողովի քարտուղար՝

Մարիամ Հայրապետյան՝ (Գնման պատասխանատու /ընթացակարգի համակարգող՝ **ԳՊ/Մհմ**) Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետ:

1. Տեղեկություն՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/02» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ներկայացված հայտերի բացման վայրի, օրվա և ժամի մասին.

1.1 Հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2024թ.-ի մայիսի 29-ին, ժամը 10:30-ին:

1.2 Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները /և նրանց առաջարկները Համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի/՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի գործունեության հասցեն
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 1փ, 13/30
2	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	ք.Երևան, Աբելյան 6/1, B601 տարածք

2. Տեղեկատվություն՝ գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գնի վերաբերյալ.

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի/այսուհետ՝ Կարգ/ 40-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման հայտով սահմանված՝ գնվելիք ապրանքների գները՝ մեկ թվով արտահայտված.

Հ/Հ	Գնվելիք ապրանքների անվանումը	Գնվելիք ապրանքների գնման գինը (պլանավորված (կանխատեսվող) գնման ընդհանուր գինը)* ՀՀ դրամ
1	Դյուրակիր համակարգիչներ	28 599 600
2	Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	41 040 000

**Սույն գնման ընթացակարգը կազմակերպված է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի 2-րդ կետի հիման վրա:*

3. Տեղեկատվություն՝ Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետով նախատեսված հիմնավորումների վերաբերյալ.

3.1 Կարգի 32-րդ կետի 25-րդ ենթակետի համաձայն՝ մինչև հրավերում փոփոխությունների կատարման համար սահմանված վերջնաժամկետը լրանալը գնահատող հանձնաժողովի քարտուղարին հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հիմնավորումներ չեն ներկայացվել:

4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

4.1 Հայտերի վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, հետևաբար պատասխաններ չեն տրամադրվել:

5. Տվյալներ բացված յուրաքանչյուր էլեկտրոնային ծրարում /այսուհետ՝ մասնակցի կողմից ներկայացված հայտ/ պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերի առկայության մասին.

5.1 **«Էյչ Գրուպ» ՍՊ** ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը: Ընդ որում, «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերությունը հայտի ապահովումը ներկայացրել է կանխիկ փողի ձևով, և հայտով ներկայացված է կանխիկ փողի վճարումը հավաստող բնօրինակ փաստաթղթից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

Հիմք ընդունելով 16.02.2024թ.-ին ՀՀ ֆինանսների նախարարությունից ստացված N 03/12-1/2884-2024 գրությունը՝ գնահատող հանձնաժողովը CLIENT-TREASURY ծրարգրային համակարգով առցանց ստուգեց «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից կանխիկ փողի ձևով ներկայացված հայտի ապահովման իսկությունը. CLIENT-TREASURY ծրարգրային համակարգում առկա է «Էյչ Գրուպ» ՍՊ ընկերության կողմից հայտի ապահովման նպատակով գանձապետական թիվ 900008000466 հաշվին համապատասխան գումարի վճարումը հավաստող տեղեկատվությունը:

5.2 **«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊ** ընկերության կողմից ներկայացված հայտում առկա են հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերը: Ընդ որում, «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊ ընկերությունը հայտի ապահովումը ներկայացրել է բանկային երաշխիքի ձևով, և հայտով ներկայացված է բանկային երաշխիքի բնօրինակից արտատպված (սկանավորված) ընթեռնելի տարբերակը:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

6. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում ներառված փաստաթղթերի/՝ «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.

6.1 «Էյչ Գրուպ» ՍՊ և «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊ ընկերություններից յուրաքանչյուրի ներկայացրած հայտում ներառված փաստաթղթերը՝ ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությունը /հավելված N 1/, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը /հավելված N 1.1/, հայտի ապահովումը, կազմված են հրավերի պահանջներին համապատասխան, հետևաբար «Էյչ Գրուպ» ՍՊ և «ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊ ընկերությունների կողմից ներկայացված հայտերը գնահատվում են բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

7. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինն է /հիմք է ընդունվել Համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը/.

Չ/Հ	Չափաբաժնի անվանումը	Մասնակցի անվանումը					
		«Էյչ Գրուպ» ՍՊԸ			«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ		
		Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/	Առաջարկած գինը /առանց ԱԱՀ/	ԱԱՀ	Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/
1	Դյուրակիր համակարգիչներ	22 950 000	4 590 000	27 540 000	-	-	-
2	Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային	-	-	-	30 780 000	6 156 000	36 936 000

8. Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով՝ հանձնաժողովը որոշեց.

8.1 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից /ճանաչել/ հայտարարել **«Էյչ Գրուպ» ՍՊ** ընկերությանը,

1-ին չափաբաժնի մասով հայտ ներկայացրած այլ մասնակիցներ չկան:

8.2 2-րդ չափաբաժնի մասով ընտրված մասնակից /ճանաչել/ հայտարարել **«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊ** ընկերությանը, **2-րդ** չափաբաժնի մասով հայտ ներկայացրած այլ մասնակիցներ չկան:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովը որոշեց.

- հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը (կցվում է).
- գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն՝ հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել համապատասխան պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ 0:

Նախագահ՝

_____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Խորեն Պետրոսյան

_____ Արթուր Թամրազյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝

_____ Մարիամ Հայրապետյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
պայմանագիր կնքելու որոշման մասին

Ընթացակարգի ծածկագիրը «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/02»

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար դյուրակիր համակարգիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին տեղեկատվությունը՝

Գնահատող հանձնաժողովի 2024 թվականի մայիսի 29-ի թիվ 3 որոշմամբ հաստատվել են ընթացակարգի բոլոր մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքները: Համաձյան որի՝

Չափաբաժին 1:

Գնման առարկա է հանդիսանում՝ Դյուրակիր համակարգիչներ.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/
1	«Էյչ Գրուպ» ՍՊԸ	X	22 950 000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Չափաբաժին 2:

Գնման առարկա է հանդիսանում՝ Բազմաֆունկցիոնալ սարք՝ լազերային.

Հ/Հ	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանող հայտեր /համապատասխանելու դեպքում նշել "X"/	Հրավերի պահանջներին չհամապատասխանող հայտեր /չհամապատասխանելու դեպքում նշել "X"/	Անհամապատասխանության համառոտ նկարագրություն
1	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	X		

Մասնակիցների զբաղեցրած տեղերը	Մասնակցի անվանումը	Ընտրված մասնակից /ընտրված մասնակցի համար նշել "X"/	Մասնակցի առաջարկած գին /առանց ԱՀՀ, ՀՀ դրամ/
1	«ՏԵԽՆՈՖՈՐՈՒՄ» ՍՊԸ	X	30 780 000

Ընտրված մասնակցին որոշելու համար կիրառված չափանիշ՝ հրավերին համապատասխանող հայտ և նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Սույն գնման ընթացակարգի համար, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի, անգործության ժամկետը կիրառելի չէ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԳՀԱՊՁԲ-24/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարիամ Հայրապետյանին:

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Այլ անհրաժեշտ տեղեկություններ՝

Հեռախոս՝ **010-511-683**:

Էլեկտրանային փոստ՝ **ddgnumner@court.am:**

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ:**